ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 7 " հոկտեմբերի 2011թ. № 102 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.16 կետի ա) ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 2-ի <<Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 774-Ն որոշմամբ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ավագ դպրոցների լիազոր մարմին ճանաչելու և նրան լիազորություններ վերապահելու մասին>> N 19-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 4-ի N 01/12.2/11208-11 գրության պահանջների, **կարգադրում եմ.**

1. <<Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքներն ու պարտականությունները ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հանձնելու, հանձնման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ/հանձնաժողովի նախագահ/
Գրիգորյան Արսեն	ՀՀ Սունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Դավթյան Սուսաննա	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Աբրահամյան Թելման	<<Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Սահակյան Արևիկ	<<Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ
Դանիելյան Գրենա	<<Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալ:

2. Հանձնման աշխատանքներն իրականացնել տասնօրյա ժամկետում:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. հոկտեմբերի 7
ք. Կապան